Տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պրակտիկան. 2011թ. առաջին եռամսյակ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ. մայիսի 10-ին հրապարակեց 2011թ.-ի առաջին եռամսյակում տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պրակտիկան:

2011թ. առաջին եռամսյակ



Այսպես.

50 հարցումներից 44-ի կամ 88% դեպքում ստացվել է լիարժեք պատասխան (նախկին 51-55 տոկոսի համեմատությամբ, 2006թ. նույն ժամանակահատված):

Միայն 2 հարցման (4%) դեպքում է ստացվել մերժում, երկուսն էլ ստացվել են ՀՀ Պաշտպանության նախարարությունից:

Լուռ մերժումների թիվն ընդամենը 3-ն է (6%): Լուռ մերժումներն արդեն բացառություն են՝ ի տարբերություն նախորդ տարիների, երբ դա ընդունված պրակտիկա էր: Հեղինակները Առողջապահության նախարարությունն է, Ստեփանավանի քաղաքապետարանը եւ Հյուսիսային համալսարանը: Առաջին երկուսը ռեկորդային են այն առումով, որ գլխավորել են նաեւ 2011թ. տարեկան Սեւ ցուցակը: Այժմ էլ շարունակում են մնալ անփոփոխ դիրքերում: Նախկինում լուռ մերժումների քանակը 30-35 տոկոս էր:

Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ ներկայումս հարցումներն անպատասխան թողնելու պրակտիկան նվազել է:

Միայն 1 դեպքում (2%) հարցմանն ի պատասխան կատարվել է հղում տեղեկատվության այլ տնօրինողների վրա, ինչը, սակայն, պատշաճ չի եղել: Հեղինակը Արտակարգ իրավիճակների նախարարությունն է: ԱԻ նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է հղումով՝ այն էլ 19-օրյա ժամկետում:

Ժամկետանց պատասխաններ - Նշենք, որ միայն մեկ մարմին է կիրառել ժամկետի հետաձգման հնարավորությունը, ինչը տրվում է "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով, եթե հարկ է կատարել հավելյալ աշխատանք: Դա ՀՀ Աշխատանքի եւ սոցյալական հարցերի նախարարությունն է:

Ժամկետների առումով լավագույնը ՀՀ մշակույթի նախարարությունն է, որը պատասխանել է ԻԱԿ հարցումն ուղարկելուց 4 օր անց: Հաջորդում են ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ պաշտպանության եւ ՀՀ սփյուռքի նախարարությունները, որոնք ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել են 5-օրյա ժամկետում, ապա՝ ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի եւ ՀՀ ֆինանսների նախարարությունները՝ որոնք ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել են 6-օրյա ժամկետում:

Ընդհանուր առմամբ, հարցումների 34%-ին տրվել է ուշացած պատասխան: Սա նշանակում է, որ ներկայումս 5-օրյա ժամկետը որոշակի դժվարություններ է ներկայացնում: Սակայն, մեր կարծիքով, եթե մարմինների ներսում գոյություն ունենան գործուն ներքին մեխանիզմներ եւ պաշտոնյաները տեղյակ լինեն պատասխանելու օրենքով նախատեսված ժամկետներին, ապա այն կարող է իրատեսական լինել:

Հիմնական խնդիրները մնում են հետեւյալները.

- ժամկետանց պատասխաններ. 10-13 օր է պատասխանելու միջին ժամկետը
- լուռ մերժումներ, երբ նախընտրում են ոչինչ չպատասխանել
- գրավոր մերժում այնպիսի տեղեկությունների տարմադրելու հարցում, որոնք չեն կարող համարվել պետական գաղտնիք:

Ի՞նչ է անհրաժեշտ անել.

- Ակտիվացնել սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակման գործընթացը պետական մարմիններում:
- Պետական կառավարման բոլոր մարմինները ունեն կայքեր, սակայն առկա տեղեկատվությունը դեռեւս բավարար համարել չի կարելի: Ինչպես նաեւ թերի է թարմացման պարբերականությունը եւ տեղեկատվության հասանելիությունը կայքերում: Միաժամանակ, տեղեկատվությունն ինտերնետով հասանելի դարձնելը չպետք է դիմողներին խանգարի գրավոր կամ բանավոր հարցումներ ներկայացնել եւ ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան:
- Մարմինները պետք է պարբերաբար (առնվազն տարին մեկ անգամ) հրապարակեն իրենց մոտ առկա տեղեկատվությունը եւ տեղադրեն այն իրենց գտնվելու վայրում՝ տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու եւ արագացնելու նպատակով:

- Պաշտոնյաների ուսուցում: Խորհուրդ է տրվում ուսուցումներ կազմակերպել տեղեկատվության համար պատասխանատու բոլոր պաշտոնյաների համար: ԻԱԿ-ն արդեն հարուստ փորձ ունի այս բնագավառում: 2010թ. նոյեմբերից մինչ օրս արդեն ԻԱԿ-ը քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ վերապատրաստել է ՏԱ ոլորտում 240 քաղաքացիական ծառայող: Ուսուցումները ներառում են ինչպես տեղեկատվության մատչելիության իրավական հարցերը, այնպես էլ տեղեկատվության կառավարման տեխնիկական ունակությունները:
- Օրենքի ակտիվ օգտագործում լրագրողների եւ հասարակական կազմակերպությունների կողմից: Կարծում ենք՝ մինչ չլինեն ակտիվ պահանջատերեր, պետական համակարգը երբեք բաց չի աշխատելու։

Զանգվածային լրատվամիջոցների լրագրողներին խորհուրդ է տրվում ակտիվորեն օգտագործել օրենքը եւ լուսաբանել տեղեկատվության ազատության հետ կապված խնդիրները, որպեսզի հասարակությունը տեղյակ լինի տեղեկատվության մատչելիության իրավունքին: Լրագրողները կարող են դառնալ տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման վերահսկողները, ինչպես նաեւ այս օրենքի ամենաակտիվ օգտագործողները՝ այդպիսով նպաստելով երկրում թափանցիկ իշխանության հաստատմանը:

Օրենքի հանրային օգտագործում: Հասարակության անդամները պետք է լայնորեն օգտվեն տեղեկություն ստանալու իրենց իրավունքից՝ օգտագործելով օրենքը եւ տեղեկատվություն պահանջելով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններից: Չի կարող ստեղծվել բաց կառավարման համակարգ, եթե չկա հասարակական պահանջարկ: